5536

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«19» 05 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 131 - 25

Նախաձեռնող՝ «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ
Երևան, Թոթվենցի 12/28

Գործունեությունը՝ Արթիկ համայնքի Գետափ բնակավայրում կրթահամալիրի կառուցում
Շիրակի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 131 - 25

«19» մայիսի 2025 թ.

Արթիկ համայնքի Գետափ բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ
Փաստաթղթերի փաթեթ՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Գետափ բնակավայր

Ներածական մաս. ՀՀ կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ» ծրագրի շրջանակներում «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է կրթահամալիրի կառուցում Արթիկ համայնքի Գետափ բնակավայրում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ է: Կրթահամալիրի կառուցապատման համար նախատեսված հողամասը զբաղեցնում է 8810, 1 մ² մակերես, կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է 1742 մ², բարեկարգման և կանաչապատման մակերեսը՝ 6841,05 մ²: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Կրթահամալիրի կառուցման նախագիծը կազմվել է 2025 թվականի մայիսի 8-ին Արթիկի համայնքապետարանի կողմից տրված N ՆԹ-3232-25 նախագծման թույլտվության պահանջներին համապատասխան:

Նկարագրական մաս. Նոր կրթահամալիրը նախատեսվում է կառուցել Գետափ բնակավայրում գոյություն ունեցող դպրոցի տարածքում, որտեղ առկա են շենք շինություններ, ենթակառուցվածքներ և պտղատու ծառեր: Այն նախատեսված է 144 աշակերտի և մանկապարտեզի 40 սանի համար: Ամենամոտ բնակելի տունը գտնվում է մոտ 20 մ հեռավորության վրա:

Կրթահամալիրը նախատեսվում է տեղադրել հողամասի երկարությամբ՝ փողոցին զուգահեռ, ինչը լսարանների գերակշիռ մասին կապահովի հարավային կողմնորոշում:

Համաձայն էսքիզային նախագծի՝ դպրոցը երկհարկանի է: Նախատեսվել է նաև մեկ հարկանի մանկապարտեզ՝ 2 խմբի համար: Նկուղային հարկում նախատեսված է գրադարան, խոհանոց, բուժկետ, պահոցներ, սանհանգույցներ, շրջ. ռեզերվուար և

պոմպարան: Կրթահամալիրի գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ՝ դպրոցական բացօթյա միջոցառումների կազմակերպման համար: Մանկապարտեզը միջանցքով կապվելու է դպրոցի մասնաշենքի հետ: Առաջին հարկում տեղակայված են լինելու հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, երկրորդ հարկում՝ նաև հանդիսությունների սրահ, վարիչի և բժշկի սենյակ:

Կրթահամալիրն ապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով, հրշեջ-փրկարարական մեքենաների մոտեցման ուղիներով: Նախատեսվում է բացօթյա մարզադաշտ, վազքուղի, տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կրթահամալիրում նախատեսվել են վերելակ և թեքահարթակներ շարժողական խնդիրներ ունեցող անձանց անվտանգ տեղաշարժն ապահովելու նպատակով: Կրթահամալիրի տարածքը նախատեսվում է ցանկապատել:

Համաձայն հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության՝ գործունեության ենթակա տարածքում բացակայում են պատմամշակութային և բնության հուշարձանները: Կառուցապատման ենթակա տարածքը երկար տարիներ կառուցապատված է եղել և չի առնչվում բնակավայրի վարչական տարածքում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքների հետ: Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ կառուցապատման տարածքում ևս առկա չեն: Ըստ հաշվետվության՝ հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը համարվում է մթնոլորտային տեղումների ինֆիլտրացիոն գոտի, որտեղ հորատված հորատանցքերում ստորգետնյա ջրեր հայտնաբերվել են 4,0 մ-4,5 մ խորություններում: Տարածքում ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են:

Շահագործման փուլում կրթահամալիրի ջրամատակարարումն իրականացվելու է համայնքային ջրագծից: Կեղտաջրերի մաքրման նպատակով տեղադրվելու է FBR մոդելի մաքրման կայան, որի հզորությունը 15 խ.մ/օր է: Հզորությունը հաշվարկված է կրթահամալիրի երեխաների և անձնակազմի թվին համապատասխան: Մաքրման կայանից մանրէազերծված ջուրը հեռացվելու է ցամաքուրդային հոր:

Կրթահամալիրի ջերմամատակարարումն իրականացվելու է կաթսայատնից՝ տաք ջրամատակարարման և ջեռուցման միջոցով:

Էլեկտրամատակարարումն իրականացվելու է «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից, գործող դպրոցի էլեկտրահաղորդման գծերով: Էլեկտրաէներգիայի խնայողության նպատակով դպրոցի տանիքին նախատեսվում է տեղակայել ֆոտովոլտային արևային վահանակներ 80 կՎտ հզորությամբ:

Գործող դպրոցի տարածքում առկա է մոտ 30 ծառ, որից 20-ը՝ պտղատու (խնձորենի և տանձենի): Նախագծային լուծումներից ելնելով՝ հնարավոր է պտղատու ծառերը հատվեն կամ տեղափոխվեն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է Արթիկի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ տարածքի բարեկարգման և արդիականացման նախագծի համաձայն և Կառավարության 2018 թվականի հունվարի 8-ի N 108-Ն որոշման պահանջներին համապատասխան տարածքի բնակլիմայական

պայմաններին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ: Տնկվելու է 60 ծառ, որից հացենի՝ 45 հատ, թխկի՝ 15 հատ, ինչպես նաև իլենի՝ 25 հատ:

Շինարարությունն իրականացվելու է երկու փուլով, առաջին փուլի ընթացքում իրականացվելու են հողային և քանդման աշխատանքներ, այնուհետև գլխավոր մասնաշենքի կառուցում, որից հետո տարածքում իրականացվելու է բարեկարգում: Շինարարության տևողությունը կազմելու է 640 օր, որի ընթացքում իրականացվելու են շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ:

Շինարարության ընթացքում իրականացվող աշխատանքների արդյունքում օդային ավազանի և ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար նախատեսվել են անհրաժեշտ միջոցառումներ: Շինարարության ընթացքում շինարարական հրապարակը ցանկապատվելու է, շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվացվելու են հատուկ հարթակների վրա, ավազ, ցեմենտ, գաջ, խիճ, այլ սորուն նյութեր, հողային զանգվածներ, շինարարական աղբ տեղափոխող տրանսպորտային միջոցները ծածկվելու են փոշու համար անթափանց ծածկոցներով, օդի դրական ջերմաստիճանի դեպքում պարբերաբար իրականացվելու է շինհրապարակի ջրցան՝ բացառելով կեղտաջրերի արտահոսքը շինարարական հրապարակի սահմաններից դուրս: Շինարարական նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորվելու են փակ տարածքներում կամ ծածկվելու են անթափանց թաղանթներով, շինարարական աղբը տեղափոխվելու է դրա համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով, իրականացվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի ստուգում և կարգավորում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնը մատակարարվելու է պատրաստի վիճակում բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված բետոնատար ավտոմեքենաներով:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու-կենցաղային նպատակների համար: Աշխատողների տեխնիկական և կենցաղային նպատակների համար օգտագործվելու է դպրոցի գոյություն ունեցող ջրագիծը, որը պատկանում է համայնքին: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ մասնագիտացված կազմակերպությունների կամ անձանց կողմից, որոնց հետ կնքվելու է պայմանագիր: Շինարարության փուլում աշխատողների կենցաղային կարիքները հոգալու նպատակով տեղադրվելու են ժամանակավոր բիոզուգարաններ, որոնց մաքրումը և շինարարության ավարտից հետո ապամոնտաժումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով Ջրահեռացումն իրականացվելու է գոյություն ունեցող կոյուղու միջոցով:

Շինարարության փուլում աղմուկի ազդեցությունը նվազեցնելու նպատակով շինտեխնիկան աշխատելու է հերթականությամբ, բոլոր շահագործվող մեքենաներն ապահովված են լինելու համապատասխան խլացուցիչներով, գիշերվա ժամերին բացառվելու է աշխատանքների իրականացումը, պահպանվելու են աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերը: Իրականացվող բնապահպանական միջոցառումների արդյունքում

շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով բացառվելու է շինանյութերի տեղադրումը հողային ծածկույթի վրա, ապահովվելու է շինտեխնիկայի և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ: Բուսահողի պահպանությունն իրականացվելու է Կառավարության 2017 թվականի նոյեմբերի 2-ի 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան, շինաշխատանքների ավարտից հետո այն օգտագործվելու է բարեկարգման և կանաչապատման աշխատանքների համար: Աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրվելու է շինարարական աղբից և իրականացվելու են բարեկարգման աշխատանքներ:

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնները (շինարարական աղբ, տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ և գրունտի մնացորդ, քանդման թափոններ) տեղափոխվելու են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված համապատասխան վայրեր: Քանդման աշխատանքներն իրականացվելու են բնապահպանական բոլոր մեղմացնող միջոցառումների կիրառմամբ: Քանդման արդյունքում առաջացած շինարարական թափոնները տեսակավորվելու են, մի մասը հանձնվելու է մասնագիտացված կազմակերպություններին, իսկ մնացած մասն աղբի հետ տեղափոխվելու է Արթիկի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայր:

Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները նախապես որոշված կլինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներին (հրդեհ, բնական աղետներ, անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ) արագ արձագանքելու նպատակով նախատեսվել են կանխարգելիչ, ինչպես նաև հակահրդեհային միջոցառումներ:

Նախատեսվող գործունեության ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

1. մթնոլորտային օդի որակի մշտադիտարկումներ՝ փոշու և օդի այլ աղտոտիչների (CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական չափաքանակների պարբերական վերահսկում՝ շինարարության փուլում ամենօրյա ռեժիմով,
2. փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա դրական ջերմաստիճանի դեպքում՝ օրական 2-3 անգամ,
3. հողային ռեսուրսի մշտադիտարկումներ,
4. շահագործվող տեխնիկայի և տրանսպորտային միջոցների պարբերական ստուգումներ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,
5. կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ կանաչապատ տարածքների հետագա խնամքի ապահովման նպատակով:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության գործընթացում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ազդակիր համայնքում (Գետափ բնակավայր) անցկացվել է հանրային լսում, որի ընթացքում բնակիչների կողմից արտահայտվել նախատեսվող

գործունեության վերաբերյալ՝ նշելով դպրոցի կառուցման կարևորությունն իրենց համար: Շինարարության փուլում բացվելու է մոտ 50 աշխատատեղ և առաջնահերթությունը տրվելու է համայնքի բնակիչներին:

Նախաձեռնողը պարտավորվել է նաև շինարարության ընթացքում իրականացնել շրջակա միջավայրի վրա առաջացող բացասական ազդեցությունները բացառող կամ նվազագույնի հասցնող լրացուցիչ միջոցառումներ:

Նախատեսվող գործունեության ընթացքում մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված միջոցառումներն իրականացվելու են «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջների պարտադիր կատարմամբ:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով հողի բերրի շերտի հետ կապված աշխատանքներն իրականացվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացվելու է «Թափոնների մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով պետական կառավարման մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել ընկերության կողմից հաշվետվությունը լրամշակելիս:

Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

Նոր դպրոցի կառուցումը հնարավորություն կտա աշակերտների ուսուցումը կազմակերպել ավելի որակյալ, անվտանգ՝ բարձր սեյսմակայունություն ունեցող, բարեկարգ, ժամանակակից չափորոշիչներով հագեցած շենքում:

Փորձաքննական պահանջներ

Կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հետևյալ փորձաքննական պահանջների կատարումը՝

1. Քանդման և շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակից դուրս փոշու տարածումը կանխարգելելու նպատակով առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով (տարածքի ցանկապատում, շենքերի և շինությունների ծածկում համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով, օդերևութաբանական անբարենպաստ պայմանների առաջացման դեպքում լրացուցիչ միջոցառումների իրականացում, շինաղբի և շինարարական նյութերի պահում և տեղափոխում անթափանց ծածկոցով և այլն),

2. շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացնել տարածքի կանաչապատում և բարեկարգում՝ Արթիկի համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն՝ տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ՝ ապահովելով դրանց հետագա պատշաճ խնամքը,

3. շինարարության ընթացքում առաջացող թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացնել

«Թափոնների մասին» օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով (բացառել թափոնների և շինարարական աղբի կուտակումները հարակից տարածքներում),

4. քանդման և շինարարության ընթացքում ապահովել աղմուկի մակարդակի վերահսկում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

5. ապահովել հաշվետվությամբ ներկայացված բոլոր բնապահպանական միջոցառումների իրականացումը քանդման և շինարարության փուլերում (օդի որակ, հողային և ջրային ռեսուրսների պահպանություն, աղմուկի և թրթռումների մակարդակ, շահագործվող տեխնիկայի պատշաճ տեխնիկական վիճակ և այլն),

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Գետափ բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Քրիստինե Հարությունյան